

~~28/11/15~~

~~15/11/15~~

171 MAR 2010

Ս. ՉԻԼԻՆԿԵՐԵԱՆ

371
2-55
Vx



ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԾՈՒԼՈՒԹԻՒՆԸ

Ե Ի

ՆՐԱ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

2368 2421
4007
32282

215

ԱԼԷԳՍԱՆԿՐԱԳՈՒ

Տպարան Գեորգ Ս. Սանդյանցի

1907



17 JUL 2013

45. 501



ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԾՈՒԼՈՒԹԻՒՆԸ

Ե Ի

ՆՐԸ ԱԹՈՋՆ ԱԹՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ի՞նչ բան է ծուլութիւնը, ինչուց է առաջ գալիս — արդեօք դա հիւանդութիւն է, որ պէտք է բժշկել, թէ պակասութիւն է, որի համար պէտք է միջոցներ գտնել, ուղղել — կամ գուցէ դա ժառանգական յատկութիւն է, որի դէմ կուելը այնչափ էլ հեշտ չէ:

Իւրաքանչիւր որ կեանքի բազմաթիւ փորձերից գիտէ, որ ծուլութիւնը մեծ պակասութիւն է, որ նա մարդու շատ բաներից յետ է ձգում, միշտ նրան սևերես է դարձնում: Բաւական է, երբ մէկին ասում են ծոյլ է. սա նշանակում է, թէ նա գործ կատարող չէ, նրան հաւատալ չի կարելի, նրա տւած խօսքը, երգումն այնչափ էլ նշանակութիւն չունի: Ծոյլերի մէջ լինում են մարդիկ, որոնք թէև խելք, պատրաստութիւն ունեն, որոշ գործերի համար նոյն իսկ շատ պետքական են, բայց և այնպէս նրանց վրայ չի կարելի վստահել: Առօրեայ կեանքի

Типография К. С. Саноянца, вь Александрополѣ.

դէպքերը մեզ ցոյց են տալիս, որ շատ անգամ դրանք իրանց ծուլութեան շնորհիւ զանազան անյետաձգելի և կարևոր գործերի ձգձգելու, անգամ քանզու պատճառ են դառնում: Մի խօսքով ծուլութիւնը մի պակասութիւն, ախտ է, որ մարդու մէջ փոքր հասակից բուն է զընում. դրա համար պէտք է ամեն կերպ աշխատել, ամեն միջոց գործ դնել, դրա առաջն առնել և հնարաւորին չափ շուտով անմեղ մանուկներին այդ պակասութեան ճանկերից ազատել: Գրանով մենք ոչ միայն մանուկներին, մեր մատաղ սերնդին օգնած կը լինենք, այլ և հասարակութեանը:

Ի՞նչ բան է ծուլութիւնը—այս հարցով շատ զբաղել են վերջին ժամանակներում մանկավարժները, բժիշկները և այն ծնողներն, որոնք ուշադիր կերպով զբաղել են իրանց որդիների դաստիարակութեան գործով: Չնայելով դրան, այնուամենայնիւ, մանկավարժական գրականութեան մէջ չկայ մի այնպիսի աչքի ընկնող, հեղինակաւոր ազբիւր, լուրջ աշխատութիւն, որ այդ հարցը դրական և վերջնական կերպով լուծէր և ճանապարհ ցոյց տար: Ուստի մեզ մնում է եղածներով բաւականանալ և աշխատել հնարաւորին չափ զիտական փաստերն և կեանքի փորձերն աչքի առաջ ունենալով որոշ միջոցներ առաջարկել: Այս հարցով մասնագիտաբար զբաղողները ոմանց կարծիքով ծուլութիւնն առաջանում է թոյլ կամքից, թոյլ

ընաւորութիւնից. մի քանիսը դա հիւանդութիւն են համարում, ոմանք էլ. մանաւանդ հին մանկավարժները, դա համարում էին մի տեսակ պակասութիւն, որի դէմ պէտք է կուել. շատերն էլ յիշեալ կարծիքներից մէկի կամ միւսի հետ միանում էին և գլխաւոր տեղը տալիս էին բընական և ստացական ժառանգութեանն ու միջավայրին:

Ա.

ԾՈՒԼՈՒԹԵԱՆ ՊԵՏԱՌՆԵՐԸ:

Ծուլութիւնը կարող է առաջ գալ շատ պատճառներից, որոնցից գլխաւորներն են.

1. Անհետաքրքրութիւն.
2. Դանդաղկոտութիւն.
3. Տկարամտութիւն.
4. Յրաժութիւն.
5. Արիւնային սանգւենիկ տեմպերամենտ.
6. Թուլակամութիւն.
7. Ֆիզիքական և հոգեկան անհամապատասխան զարգացում.
8. Բնական ձգտումներից շեղելը.
9. Ժառանգական անտարբերութիւն և յիշողութեան միակողմանի զարգացում.

- 10. Թեթևամտութիւն և
- 11. Փիղիբական թուլութիւն:

ԱՆՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ

I. Ամէնքին էլ յայտնի է. որ գոյութեան կուր մէջ մարդուն կուելու զէնք տուող, զարգացնող միջոցներից մէկն էլ հետաքրքրութիւնն է. սա իւրաքանչիւր մտածող էակի համար մի տեսակ առաջ մղող խթան է: Յայտնի է նոյնպէս, որ մանուկները շատ հետաքրքիր և հարցասէր են. դրա համար էլ պէտք է նրանց այս յատկութիւնից օգտուել և աշխատել ամէն կերպ լաուղղութիւն տալ, առաջնորդել: Երբ մանուկը որևէ բանով հետաքրքրուում է, նա առանց ձանձրոյթի՝ շարունակ հարցեր է տալիս և ազահարուզում է նորանոր բաներ սովորել. սրա հակառակ, երբ տեսածը կամ լսածը նրան չի հետաքրքրում, նրա մէջ հետզհետէ ձանձրոյթ է առաջ դալիս: Կարող է պատահել, որ սրտամաշիւ նիւթը թէև մանկան համար հետաքրքիր է, բայց պատմողը այնպէս մութ, անորոշ կցկտուր կերպով է հարողում, որ նա ձանձրանում է, ուշադրութեամբ չի հետևում, չի հասկանում. որի համար էլ նա ամեն կերպ աշխատում է այդ անտանելի և անհետաքրքիր աշխատանքից

փախչել, խուսափել. այսպիսով սկիզբն է դրուում ծուլութեան:

Երբ մանկանը պատմելու նիւթը, խաղը, երգը և առհասարակ զբաղմունքները գրաւում և հետաքրքրում են այն ժամանակ նա սիրով, առանց ձանձրոյթի լսում, զբաղւում է և երկար ժամանակ իր ուշադրութիւնն ու ոյժը զրանց վրայ է կենդրոնացնում: Այսպիսի զէպքերում կր տեսնենք, որ մանուկն ամեն ինչ հեշտ յաջող կերպով ըմբռնում, սովորում է: Սրա պատճառը հետեետն է. մէկ կողմից մանկան հետաքրքրող նիւթը բաւականութիւն, հաճութիւն պատճառելով նրա մէջ փոփոխութիւն է առաջ բերում, միւս կողմից նրա տրամադրութիւնը լաւացնում է, սովորականից աւելի աշխոյժ, դուարթ ու եռանդուն է դարձնում. բացի դրանից նրա ախորժակը բացւում է, մարսողութիւնը լաւ է կատարւում, առատ սնունդ ստանալու շնորհիւ՝ ոյժերը շատանում և աշխատանքի եռանդն բարձրանում է: Սա ոչ միայն փոքրերի այլ և հասակաւորների համար ընդհանուր օրէնք է: Եթէ մէկը առողջ է և հետաքրքիր, նա միշտ էլ աշխատասէր է և յառաջադէմ, որովհետև նրա կատարած գործը իրան գօհութիւն, հաճութիւն պատճառելով յառաջ գնալուն նպաստում է: Այն ինչ անհետաքրքիր գործը, անհետաքրքիր նիւթը նրա ուշադրութիւնը ցրելով ձանձրացնում է, աշխատանքը միակերպ, տաղտկալի և վերջապէս անտանելի է դարձնում. բնա-

կանաբար սրան յաջորդում է ծուլութիւն:

Երբ մանուկները ֆիզիքապէս առողջ են, սննդառութիւնը կանոնաւոր, ուժերը տեղը և եռանդը շատ՝ այն ժամանակ նրանք թուլացած անգործ չեն կարող նստել. նրանք անպատճառ աշխատում են անախորժ անգործութիւնից դուրս գալ և որոնում են ուրիշ աշխատանք, ուրիշ գործ: Պէտք է աչքի առաջ ունենանք, որ մանուկներն որչափ էլ շարժելու, գործելու, աշխատելու ցանկութիւն ունենան, այնուամենայնիւ նրանք անընդունակ են դեռևս տեղական աշխատանքի, անկարող են որևէ բանի վերայ երկար ժամանակ կենտրոնանալ. այդ պատճառով էլ նրանք շուտ շուտ մի գործից միւսին, մի աշխատանքից երկրորդին են դիմում: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այս շարժուն անհանդիստ զրույթիւնը նրանց դեռևս չկազմակերպւած գործարանները յոգնեցնում, թուլացնում է: Ուստի շատ մեծ սխալ կըլինի այն մարդկանց կողմից, որոնք այս փոքրիկ արարածներին այնպիսի լուրջ, դժւար աշխատանքներ, զբաղմունքներ են տալիս, որոնք նրանցից երկար ժամանակ, լարւած զրույթիւն և ուշադրութիւն են պահանջում. իսկ երբ այս ամէնի վերայ աւելացնում են ստիպմունք և երկիւղ, դա արդէն պակասը լրացնում է: Այս ամէնը միայն մանկան առողջութիւնը թուլացնում, անպէտք մարդ է դարձնում:

II. Անհետաքրքրութիւն կարող է առաջ

գալ դպրոցում, ընտանիքի մէջ և մասնաւոր կերպով պարապելիս: Սրանք բոլորն էլ զանազան պայմանների մէջ նպաստում են մանուկների այս պակասութեան առաջ գալուն և ոչ մէկին առանձնապէս չէ կարելի մեղադրել: Դպրոցական դասերն երբէմն այնպէս չոր ու ցամաք, միակերպ, մեռած կերպով են առաջ տարւում, որ աշակերտներին միմիայն ձանձրացնում են. դեռ այս բաւական չէ, աւանդած նիւթն էլ նրանց ոյժերից բարձր է լինում և շատ անգամ այս ամէնի վերայ աւելանում է նաև դասաւանդման անկանոն, ոչ մանկավարժական եղանակը: Այս ամէնը մեռցնում է մանկան մէջ աշխատելու սէրը հետզհետէ թուլացնելով նրա եռանդը, դարձնում է նրան աշխատելու անընդունակ, ծոյլ: Մանկավարժական պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ շատ անգամ այսպիսի բաներ պատահել են այնպիսի մանուկների հետ, որոնք ապագային նշանաւոր տաղանդներ, նոյն իսկ աշխարհահռչակ մարդիկ են եղել: Բնականից օժտւած մանուկների վառ երևակայութիւնը ինքնուրոյն մտածողութիւնն ու գործունէութիւնը ամէն անգամ չեն ճնշւում ու ոչնչանում դպրոցական այս նեղ բթացնող պայմաններից: Այսպիսիները դպրոցում բաւականութիւն, բաւարարութիւն չգտնելով ստիպւած են դպրոցից դուրս, ընկերներից, մեծերից, զբոսներից և կենդանի բնութիւնից օգտուել և իրանց հետաքրքրութեանը բաւարարութիւն տալ: Դպրոցում

անուղղելի ծոյլեր են համարել մանկական հասակում հռչակաւոր Նիւտօն, Չէքսպիր, Բայրօն, Վալտէր Սկօտտ, Փրանկլին, Սվիտ և այլն: Ատիսօն իբրև ծոյլ դպրոցից փախչում, անտառում թագնւում էր. նշանաւոր մանկավարժ Պետալօցցին դպրոցում ոչ մի հետաքրքրութիւն և հակումն չէր ցոյց տալիս մանկավարժական գիտութիւններին, որոնք սաստիկ անշնորհք կերպով էին աւանդում: այն ինչ յետոյ նա հէնց այդ ասպարիգում մեծ հռչակ ունեցաւ:

III. Անհետաքրքրութիւն առաջ է գալիս նոյնպէս առարկան չսիրելուց: Այս դէպքում աշակերտը սառնասիրտ և անտարբեր է վերաբերում դէպի չսիրած առարկան. մեծ մասամբ այսպէս պատահում է հին լեզուներ, վերացական առարկաներ, չոր ու ցամաք բառեր սովորելիս: Ծնողներն ու առաջնորդներն աշխատում են ամեն կերպ համոզել, հասկացնել, որ այդ ամէնը նրան պէտք է, ապագային անհրաժեշտ է, ուստի պարտաւոր է սովորել, այս և սրա նման քարոզներն ու խրատները չեն կարող մանկան անտարբերութեան տռաջն առնել, չսիրած առարկայով զբաղեցնել տալ: Երբէմ զրգուում են մանկան պատասխիրութիւնը, օրինակ բերելով ընկերին, ամաչեցնում են նրան, բայց ոչինչ չի օգնում: Այս ամէնը սխալ և գուր միջոցներ են: Այդպիսի դէպքերում միայն հմուտ մանկավարժը կարող է օգնել. նա այդ չսիրած առարկան այնպիսի ձևով կ'անցնի,

այնպէս կը հետաքրքրէ կը գրաւէ, մանկան հոգու և ցանկութեան համապատասխան կը տանէ, որ մանուկը մեծ յոժարութեամբ, նոյն իսկ սիրով կսկսէ պարասել այդ առարկայով. բնականաբար դասաւանդութեան եղանակը նոյնպէս մեծ նշանակութիւն ունի:

Բ.

Երբէմ մանկան ընտանի դանդաղուածութիւնն էլ ծուլութիւն է համարում. այն ինչ դրա առաջն կարելի է առնել փոքրութիւնից. ապա թէ ոչ մեծ հասակում ուղղելը շատ դժուար կը լինի: Ի'հարկէ որչափ էլ ուղեմանք, Փլէգմա երեխան երբէք սանգենիկ չի դառնայ և ոչ էլ խօլերիկ. ոչ որ այդ չի կարող պահանջել, միայն թէ ծնողներն ու դաստիարակները պիտի աշխատեն և հնարաւորին չափ դանդաղ կոտ մանկանը աշխոյժ և գործունեայ դարձնել: Այս բանին հասնելու համար ամենից առաջ պէտք է դիտել, թէ մանուկը ինչ բան աւելի է սիրում. հանդիստ նստել թէ խաղալ, վազվզել կամ շարժուլ: Եթէ նա հանդիստ նստելը գերադասում է, որևէ գործ կատարելուց ձանձրանում է, կամ շուտով յոգնում թմրում է, սխալների մէջ չրնկնելու համար, նախ պէտք է հետեւել արդեօք երեխան տկար չէ. եթէ այն, ապա ուրեմն պէտք է բժշկի դիմել, հիւսնդութեան առաջն առնել: Երբ նա բժշկի, կազ-

մեծքը զօրեղանայ, նշանակում է դանդաղկոտութեան պատճառը վերացւած է: Բայց եթէ մանուկը առանց ֆիզիքական պատճառի դանդաղկոտ է, դժւարանում է շարժել, գործել, այն ժամանակ պէտք է աշխատել նրան հանել այդ դրութիւնից, վարժեցնել արագ շարժումների և եռանդ ներշնչել, հակառակ դէպքում դանդաղկոտութիւնը կը զարգանայ և կը դառնայ ծուլութիւն:

I. Գանդաղկոտութիւնը երևում է *յարմարութիւն որոնելու մէջ*. օրինակ. մայրը ասում է երեխաներին—ձեզանից իւրաքանչիւրը թող մառանից շաքարահաց բերէ և կաթի հետ ուտէ: Գանդաղկոտ Ջաւէնը ասում է Մուկուչին—«Ի՞նչ կը լինի ինձ համար էլ բերես»—եղբայրը մերժում է.—«աւելի լաւ է առանց շաքարահացի խմել կաթը, քան գնալ մառան» ասում փոքրիկ Փլէզման և նստած մնում է: Մի օրինակ ևս.—հայրը աւաջարկում է երեխաներին առաւօտեան վաղ վեր կենալ և գնալ գրօսնելու: Նրանք սաստիկ ուրախանում են: Բայց երբ դանդաղկոտ Գէորդը լսում է որ, ոտով պէտք է գնան, սար ու ձոր բարձրանան ու իջնեն, նա հրաժարւում է այդ գրօսանքից և աւելի լաւ է համարում դեռ մի ժամ էլ հանգիստ պառկել փափուկ անկողնում, քան եղբայների հետ ուրախ ժամանակ անցկացնել:

Երբ ձեր մանուկների մէջ այսպիսի հակումներ նկատէք, պէտք է աշխատէք իսկոյն դրա

առաձն առնել: Աշխատեցէք այնպիսի գործունէութիւն հնարել, որը նրանց դուրեկան է. դրանցէք այնպիսի հետաքրքիր բանով, որ նրանք մոռանան իրանց յարմարութիւնը և միանան ընկերների խաղերին, գրադմունքին, աշխատանքին: Ենթադրենք օրինակի համար, որ մանուկները գրօսանք են կատարում և կարիք կայ հերթով օրէկ կողով կամ կապոց տանել, պարզ է, որ դանդաղկոտ մանուկը կ'աշխատի ազատ լինել այդ անյարմարութիւնից. բայց եթէ նա իմանայ, որ կողովի մէջ կայ իր սիրած կարկանդակը կամ միրզը և ով որ շտանի կողովը նա ոչինչ չի ստանայ, փոքրիկ դանդաղկոտը մոռանում է իր յարմարութիւնը վերցնում է կողովը և որոշ ժամանակ ուսին դրած տանում է: Այս և սրա նման շատ դէպքերում նա կամայ կամայ սովորում է գոհել իր յարմարութիւնը, դուրս գալ դանդաղկոտութիւնից և սովորում է աշխատանքի:

II. Գանդաղկոտ երեխան բացի յարմարութիւն որոնելուց նոյնպէս խոյս է տալիս աշխատանքից: Խրատելով կամ ստիպելով գուցէ կարելի լինի այդպիսիներին օրէկ պորձ կատարել տալ, բայց գործ սիրել տալ չի կարելի: Որպէսզի մանուկը սիրով գործ կատարէ, որպէսզի նա ինքը ցանկանայ աշխատել, հարկաւոր է, որ այդ աշխատանքը, գործը նրան հետաքրքիր լինի, դուր գայ: Երբէք չի կարելի մանկանը ծոյլ համարել, եթէ նա չի նստում ֆրանսերէն կամ ռուսերէն

խօսքերը մերենայաբար անգիր անում. քանի որ նոյն մանուկը ժամերով, առանց ձանձրոյթի մի ուրիշ գործով զբաղում է: Միայն այն դէպքում, երբ մանուկը ծուլանում, ամէն բանից շուտով ձանձրանում է, ոչ մի բանով չի զբաղում, նա դանդաղկոտ է և պէտք է աշխատել զբա առաջըն առնել, աշխատանքը զբաւիչ և հետաքրքիր դարձնել ու գործունէութեան վարժեցնել: Այսպիսի հանգամանքներում ծեծն ու պատիժը միանգամայն աւելորդ են. ճիշտ է այդ միջոցով կարելի է որևէ գործ գլուխ բերել, բայց երբէք չի կարելի նրան աշխատասէր դարձնել: Ծեծով և խստութեամբ ոչ մի ֆիզիկա չի բժշկել:

Եթէ փոքրիկ ֆիզիկա աղջիկը ձանձրանում է կարելուց՝ կամ գործելուց աշխատեցէք աննկատելի կերպով նրա բարեսրտութիւնը զրգռել, կարելու գործել տալ. օրինակի համար. եթէ նրա աղբատ ընկերուհին գուլբա չունի և բորիկ է մտայնել, տւէք նրան թիւ, թող ընկերուհու համար մի գոյգ գուլբա գործէ և ընծայէ: Եթէ նրա սիրելի տիկնիկը մերկ է, տւէք նրան կտոր, թիւ, ասեղ թող նա ձեր օգնութեամբ տիկնիկի համար հագուստ կարէ: Այսպիսով նա աննկատելի կերպով հետզհետէ աշխատելու կը վարժուի և ծուլութեան ճանկերից կ'ազատուի,

2 պէտք է մեղադրել մանուկներին ծուլութեան մէջ, եթէ զպրոցում նրանք այնքան էլ ճշտապահ չեն: Նախ՝ կարող է պատահել, որ

այս կամ այն առարկան նա չի սիրում. այս բանը կամ ուսուցչի վատ աւանդելուց է առաջ գալիս, կամ ինքը մանուկը այդ առարկայի մէջ ոչ մի ձիրք չունի: Երկրորդ՝ կարող է պատահել, որ նա ֆիզիքապէս անկարող է բոլոր դասերը առանց յոգնելու, միատեսակ եռանդով լսել և սովորել: Վերջապէս շատ բնական է որ ստիպողական բանը դուրեկան չէ: Այսպէս, փորձեցէք զնդակ խաղալ սիրող մանկանը ստիպել, որ նա ամեն օր անպատճառ ժամը 9—10-ը զնդակ խաղայ, դուք կը համոզուէք, որ այդ չափած ձևած կարգից նա շուտով կը ձանձրանայ և այլևս չի խաղայ: Այն ինչ գպրոցում նրանից պահանջում ենք, որ առանց թուլանալու, նոյն եռանդով ժամը 8—9-ը ռուսերէն դաս լսէ, 9—10-ը աշխարհագրութեան, 10—11-ը թւաբանական խնդիրներ լուծէ և այլն: Մենք պէտք է բաւականանանք, երբ մանուկը իր գասը սովորել է և ոյժին համեմատ նոր դասին հետևում է: Հարցը նրանում չէ, որ նա շատ բան սովորի, այլ նրանումն է, որ նա արածը սիրով և աշխոյժով կատարէ: Դանդաղ մարդը ոչնչի պէտք չէ. անհրաժեշտ է 14—16 տարեկան շեղած նրան այդ պակասութիւնից բժշկել, ապա թէ ոչ նա մի տեսակ բեռ կը դառնայ թէ իր և թէ շրջապատողների համար: Դուք հասակաւորներ ձեր ցանկութեան համաձայն մի չափէք ձեւէք, ոչ մի պայմանով մանուկների գործին մի խառնուէք, այլ միայն զրէք նրանց


այնպիսի հանգամանքների մէջ, որ նրանք իրենց համար աննկատելի, բայց յաջող կերպով ընթանան ձեր ցոյց տուած բարի ճանապարհով և ազատ, ինքնուրոյն զարգանան: Այն ժամանակ դուք կը տեսնէք, որ նրանք դեռ մի քայլ էլ ձեզանից առաջ կանցնեն: Մի հնդիկ բանաստեղծ ասում է. «Ծնողների ինքնասիրութիւնը պէտք է նրա մէջ լինի, որ որդիքը իրանցից աւելի խելօք և զարգացած լինեն»:

Գ.

Դպրոցում, տանը և առհասարակ կեանքի մէջ պատահում են մանուկներ, որոնք աշխատում, ոյժ, եռանդ են թափում, բայց և այնպէս կանոնաւոր յառաջադիմութիւն ցոյց չեն տալիս: Սրանք շատ անգամ իրանց ոյժերից վեր աշխատում են և չի կարելի ասել, որ նրանք աշխատասէր չեն. չնայելով դրան նրանք միշտ էլ ընկերներից, հասակակիցներից յետ են մնում: Այս կարգի մանուկները տխուր, թմրած, դանդաղկոտ և միշտ էլ տրտնջացող ու դժգոհ են. ուրախութիւն, շարաճճիութիւն կարծես սրանց համար գոյութիւն չունի: Այսպիսիները որևէ տեղում բաւական երկար ժամանակ թմրած մնում, են սրանց հայեացքը տխուր, խղճալի է և կարծես ուզում են ասել. — օգնեցէք մեզ, մենք էլ ընկերներին նման թռչկոտել, խաղալ ենք ուզում, հեռացրէք այս կապող կաշկանդող ար-

դելքը»: Այս մտնուկներին շատ անգամ սխալմամբ ծոյլ են համարում, այն ինչ սրտնք ի՛ծնէ տկարամիտ են, այսինքն այդ դրութիւնը բնական պակասութիւն է, պատճառը նրանց ուղեղի կազմութեան մէջն է: Եթէ այսպէս է, նշանակում է ոչ ոք իրաւունք չպիտի համարէ ծաղրել, անպատել, ծոյլ անւանել և դրանով նրանց մէջ գտնւած թեթև յոյսն ու աշխատելու ցանկութիւնը սաղմի մէջ խեղդել: Այսպիսիների հետ պէտք է բոլորովին այլ կերպ վարւել: Ծեծը, յանդիմանութիւնը, պատիժները երբէք յաջող նպատակի չեն հասցնել: «Միրելի հայրիկ ինձ թագիր. ասում է դասի ժամանակ խղճալի ձայնով որդին իր խտտապահանջ հօրը, ինձ թագիր, որովհետև ասածդ չհասկացայ»: Երկիւղը, խիստ միջոցները այսպիսի դժբաղդ դէպքերի թիւը միայն շատացնում են: Որպէսզի այսպիսիներին օգնւած լինէք զբաղեցրէք նրանց թեթև մտաւոր աշխատանքներով, հետզհետէ նրանց առաջ տարէք, գործի մէջ քաշեցէք, ուժ եռանդ ներշնչեցէք ամենաթեթև յառաջադիմութիւնով անգամ բաւականացէք, քաջալերեցէք և համբերութեամբ, նոյն ուղղութեամբ շարունակելով դուք կը տեսնէք, որ նրանցից կանոնաւոր, պէտքական մարդիկ դուրս կը գան: Այսպիսի հանգամանքներում աչքի առաջ ունեցէք, թէ մանուկը ինչ բանի մէջ փոքր ի շատէ ընդունակ է. թէ և ընդհանուր զարգացումն ու կրթութիւնն էլ պէտք է ի՛նկատի ունենայ, բայց սխալութեամբ աշխատե-

1207
32281



ցէք նրանց բնական ձգտումներին և հոգեկան լաւ յատկութիւններին զարկ տալ: Եղել են զէպքեր, որ այդ միջոցով զբանցից նշանաւոր ուժեր են առաջ եկել:

Դ.

Չատ անգամ մանուկները ցրած են լինում, այսինքն նրանց հոգեկան կազմն այնպէս է, որ մի բանի վերայ իսկոյն չեն կարող կենտրոնանալ, մտածել և զբանով զբաղել: Այս դէպքում գործից չհասկացող առաջնորդները մանկանը ծոյլ անունով են կնքում և զբանով գործը վերջացնում: Այսպիսի մեղադրանքը միանգամայն անարգարացի է և սգիտութիւնից առաջացած. սրանով մանկանը ի՛նչուր տեղը յուսահատեցնում, թուլացնում և վնասում են:

Յրւածութիւնը մեր հոգու ընդունակութեան հետ կապւած մի այլ տեսակի յատկութիւն է. սա կարող է առաջ գալ մի բանի պատճառներից:

I. Կան մանուկներ, որոնք մէկին լսելու ժամանակ որևէ խօսքով կամ մտքով վայրկենական կերպով զբաւում և կապում են ու զբանով զբաղում. նրանք այլևս ուշադրութիւն չեն կարող դարձնել միևս ասածների վերայ և լսածի ամբողջութիւնը չեն կարող ըմբռնել և հասկանալ: Երբէմն նրանք այնպէս են տարւում իրենց մտքերով, որ չեզոքանում, աչքերը բևե-

ւում են մի բանի վերայ և ապշած մնում են. նոյն իսկ այդ սկզբնապատճառ եղած միտքն անգամ նրանց մէջ թուլանում է և խօր հետք չի թողնում:

II. Կան մանուկներ էլ, որոնք որևէ առարկայով, տեսարանով կամ մի մտքով այնպէս են զբաւում, որ նրանց համար այլևս ոչ մի բան չի կարող գոյութիւն ունենալ, կարծես նրանք աշխարհից կտրւած են: Այս տեսակ մանկանը գերում, կաշկանդում է որևէ նոր տեսարան, օրինակ. պար եկող արջը, կապիկը, զինւորների խաղը կամ երգը և այլն:

III. Յրւածութիւն է առաջ գալիս նոյնպէս, երբ մանուկը որևէ բան հաստատ չգիտէ և՛ գիտեցածը չէ կարողացել հոգու մէջ կանոնաւոր, իրենց բովանդակութեան համապատասխան կերպով կապել. զրա համար էլ նրա պատասխանները սխալ. պատմածը թերի և կցկտուր են լինում: Ահա այսպիսի ցրւածներին էլ ծոյլ անունն են տալիս:

IV. Յրւածութիւն է առաջանում ուղեղի յոգնածութիւնից: Եթէ այս բանի վերայ վաղօրօք ուշք չդարձնէք, յոգնածութեան առաջն շառնէք, այն ժամանակ այդ զրութիւնը հետըզհետէ կը բարդանայ և բացի ֆիզիքական պէս պէս պակասութիւններից նրա մտաւոր ուժերը, որևէ բանի վերայ կենտրոնանալու ընդունակութիւնն էլ կը թուլանան և նա կը դառնայ անուշադիր, ցրւած: Դեռ այդ բաւական չէ, զի-

տակցութեան թուլանալու հետ և տեսակ տեսակ ուղեղի հիւանդութիւններ կ'առաջանան այդպիսի հանգամանքներում: Մտաւոր յոգնածութեան արտաքին նշանները մանկան վերայ շատ պարզ կերպով կը նկատուին.— գունատ դէմքը, արեան պակասութիւնը, դժգոհութիւնը, յոգնած հայեացքը, տխրութիւնն ու դանդաղ շարժումները, նստած ժամանակ մարմնի կոր դիրքը և այլն*:

V. Յրւած, անհանգիստ և վատ սովորողներ են նոյնպէս այն մանուկները, որոնց սեռական զարգացումը կանոնաւոր չէ ընթանում: Այս բանը սովորաբար տեղի է ունենում 12—16 տարեկան հասակում: Մանրակրկիտ քննութիւնները այս բանը փաստացի կերպով ապացուցել են: Այս կարգի մանուկները դպրոցում յայտնի են որպէս անուղղելի ծոյլեր, անպէտքներ և շատ անգամ դատապարտում են արձակելու:

Երբ այս դրութիւնը անցնում է, նրանք ուղղուում և կանոնաւոր աշակերտներ են դառնում: Որպէսզի այսպիսի դէպքերում չսխալւէք և խեղճ մանուկներին չանբաղդացնէք, պէտք է դիմէք հմուտ բժիշկների և նրանց խորհրդի համաձայն վարւէք:

Գաստրարակութեան գլխաւոր խնդիրներից մէկն էլ ցրւածութեան առաջն առնելն է. սրա վերայ ուշք պէտք է դարձնեն ծնողները, դաստիարակները, մանաւանդ դպրոցները: Անհրա-

* Տես «Մտաւոր յոգնածութիւն» 2րդինկարեանի:

ժեշտ է որոշել, թէ ցրւածութիւնն ինչ բանից է առաջացել և նպատակայարմար միջոցների դիմել: Առաջնորդողները պէտք է ուղիղ ճանապարհ բռնեն և սխալների մէջ չընկնեն: Մանկան ուղեղի բջիջների պատկերացումների ոյժը անմիտ, անտեղի անզիր արած նիւթերով չթուլացնեն: Պատժի համար ձանձրալի և յոգնեցուցիչ աշխատանքներ չտան: Եթէ ցրւածութիւնը մտաւոր յոգնածութիւնից է առաջացել, նշանակում է ծնողը, դաստիարակը շատ փափուկ և վտանգաւոր դրութեան առաջ է կանգնած: Սրանից առաջացող վտանգներն աչքի առաջ ունենալով, դիմեցէք նրան փրկելու համար միակ միջոցին, այսինքն առ ժամանակ հեռացրէք նրան դպրոցից, մի թոյլ տաք պարապելու և կատարեալ հանգստութիւն տւէք: Սրա հետ միասին գործ դրէք առողջապահական միջոցներ, մինչև որ նրանց կորցրած ուժերը վերականգնեն:

Ն.

Ինչպէս թիթեռնիկներն անդադար, առանց հանգստանալու թռչկոտում են ծաղկից ծաղիկ, մի տեղից միւսը, այնպէս էլ կան եռանդոտ շարժուն մանուկներ, որոնք ոչ մի տեղ հանգստութիւն չունեն:

Սրանք մի որոշ գործով երկար ժամանակ չեն կարող պարապել. թէև ընդունակ և ամէն բան շուտով ըմբռնում, սովորում են, բայց ոչ

մի բան կանոնաւոր չեն կատարում, այլ ամէն ինչ թերի կիսատ են թողնում: Այս կարգի մանուկներն էլ չեն կարող տեսածը, լսածը, կարգացածը կանոնաւոր պատմել, տեղեկութիւն տալ: Այսպիսի արիւնային կամ սանգւենիկ մանուկների պակասութիւնը աւելի աչքի է ընկնում նրանց գրաւոր աշխատութիւնների մէջ. տառեր, խօսքեր բաց թողնելը նրանց համար սովորական բան է:

Սանգւենիկները պատմելիս զանազան դէպքեր, եղելութիւններ բաց են թողնում, կամ շատ անգամ իրանցից աւելացնում են. զրա պատճառն այն է, որ նրանք միշտ շտապում են, աշխատում են շուտ վերջացնել և մի ուրիշ նոր բանով զբաղել: Մանուկների այս գրութիւնը առաջ է գալիս նրանց ժառանգական տրամադրութիւնից, կամ նրանց ըմբռնողութեան ուժի թուլութիւնից, կամ ժամանակի ընթացքում ձեռք բերած սովորութիւններից: Սրանք էլ իզուր տեղը ծոյլ անունն են ժառանգում: Այն ինչ այս տեսակ մանուկներն են, որ ամէն բանով հետաքրքրւում են, ամէն ինչ ուզում են տեսնել, իմանալ, իրանց կազմաւորի համաձայն ամէն ինչից ուզում են բաւականութիւն ստանալ. բայց շնորհիւ անհաստատ բնաւորութեան, երկար ժամանակ որեւէ բանով չեն կարող զբաղել և այդ պատճառով հետզհետէ, ժամանակի ընթացքում նրանց մէջ ծուլանալու արամադրութիւն է առաջ գալիս:

Ընդհանրապէս մանուկներն այն բաներով են հետաքրքրւում և ուշադրութեամբ զբաղւում, որոնք նրանց բնական հակումներին համապատասխանում են: Ուրեմն, եթէ նպատակայարմար կերպով նրանց ուշադրութիւնը վարժեցնէք, այն ժամանակ վստահօրէն կարելի է ասել, որ նրանք հաստատուն բնաւորութեան տէր կարող են դառնալ:

Գծբողգաբար շատերը այս բաները չեն հասկանում, մանկան բնական ձգտումները չեն ուզում ուսումնասիրել. սրա հետևանքն այն է լինում, որ մանկան ազատ զարգացման ժամանակ անհմուտ կերպով միջամտում են, իրանց ցանկացած նիւթերով են զբաղեցնում, իսկ սրանից առաջանում է. 1) Շախ՝ մանուկը կը զրկւի այն հիմնական կենտրոնից, որը նոր ամող կամքի զարգացմանը հիմք պիտի ծայրայէր:

2) Մանուկների բնական հետաքրքրութիւնը մէկ կողմից, ստիպողական կերպով զանազան առարկաներով զբաղեցնելը միւս կողմից, արագ եւ թոռցիկ տալատրութիւնների եւ երեսոյթների ազդեցութիւնը երբորդ կողմից թոյլ չեն տալիս մանուկներին նրանց ներքին բովանդակութեան մէջ թափանցելու, այդ պատճառով նրանք բաւականանում են միայն արտաքին երեսոյթներով: Որովհետեւ, ինչպէս ասացինք, այսպիսի մանուկներին զանազանակերպ նորութիւնները զբաղիչ են, զրա համար էլ նրանք ձգտում են բազմազանութեան, նորութիւնների պահանջ են զգում

և անկարող են միակերպ տևողական աշխատանքի դիմանալու, որը նրանց բնական պահանջներին ընդդէմ է: Սրա համար է, որ երբ մեծերը պահանջում են նրանցից որևէ տևողական գործ գլուխ բերել, նրանք ձգձգում ծուլութեան գիրկն են ընկնում: Սրանք սաստիկ նեարդային, շուտ յուզւող և իրանց արածին հաշիւ շտուկ են: 1882 թիւն ժընեի միջազգային առողջապահական ընդհանուր խորհրդում դժի. Սիկորսկին դժարութեամբ դաստիարակող մանուկների մասին գեկուցում տւեց: Նրա տեղեկութիւններից և փորձերից ի միջի այլոց երևաց, որ մանուկների մեծամասնութիւնը ծուլանալու հակումն ունեն և այդ պակասութեան մէջ թաղւած են: Դրա պատճառներից մէկն էլ այս է. — այն մանուկները որոնք սաստիկ զգայուն և նեարդային են, ֆիզիքապէս և հոգեպէս շուտ զրգուող և յուզւող են: Նկատւած է, որ դրանք ընդհանրապէս ընդունակ և մտաւորապէս լաւ օժտւած են. միայն նրանց պակասութիւնն այն է, որ անկարող են տևողական աշխատանքի դիմանալ: Դրժբաղդաբար պէտք է ասել, որ յիշեալ մանուկները բաւականին մեծ թիւ են տալիս, մօտաւորապէս 60%:

Երբ այսպիսի մանուկները ընկնում են անհմուտ, չհասկացող ղեկավարի ձեռք, ապա զրպրոց յաճախում, շատ պարզ է, որ նրանք ոչ մի կերպ չեն կարող դպրոցի պահանջներին բաւարարութիւն տալ, դպրոցն էլ անկարող է ամէ-

րին առանձին առանձին ուղղել, այնպէս որ վերջ ի վերջոյ այդպիսիներն ստիպւած են լինում դպրոցից դուրս գալ:

Այժմ հարց է առաջ գալիս—այսպիսի պայմաններում ինչ պէտք է անեն ծնողներն ու մասնագէտ դաստիարակները: Անշուշտ պէտք է խուսափեն նախկին սխալ վարմունքներից: Անհրաժեշտ է հեռացնել այդպիսի մանուկներին աղմկալի քաղաքներից, բազմամարդ շրջանից և առանձնացնել ազատ բնութեան մէջ. թող նրանց առանց այն էլ զրգուած նեարդերը առ ժամանակ հանգստանան:

Յետոյ հետաքրքրեցէք այնպիսի առարկաներով, երևոյթներով, խնդիրներով, որոնք նրանց հաճելի և դուրեկան են և աշխատեցէք այնպէս անել, որ մանուկներն հետզհետէ իրանք վարժեն ինքնուրոյն կերպով այդ երևոյթները դիտել, կամ որևէ գործ գլուխ բերել: Միևնոյն ժամանակ չպէտք է նրանց հեռու պահել գանազան դժարութիւններից, անախորժութիւններից: Թողէք նրանք սովորեն իրանց կատարած գործի յաջողութեամբ ուրախանալ, և անյաջողութիւնից տխրել: Մի արգելէք գանազան նախազուշուրութիւններով նրանց ինքնուրոյն ձեռնարկութիւնները, նոյն իսկ եթէ դրանք անմիաբաներ լինեն: Երբէմն ընկնելով անյաջողութեան կամ դժարութիւնների մէջ, նրանք կը սովորեն դիտող և վաղօրօք մտածող լինել: Պարզ է, որ պէտք է հետևել և բարդութիւններ պատահելիս

առաջնորդել, ուղղել, որպէսզի նրանք միանգամայն չընկճեն և չյուսահատեն: Ընդհակառակը, եթէ ամէն դժուարութիւնից հետո պահէք, անյաջողութիւններից խուսափէք, երբէք նրանց մէջ հաստատակամութիւն չէք կարող զարգացնել: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մանուկները անյաջողութիւնից կը տխրեն: Այս բանից չպէտք է վախենալ, քանի որ կեանքի մէջ միշտ էլ այդպիսի դէպքեր պատահում են և մանուկները պէտք է ծանօթանան դրանց հետ, որպէս բնական երևոյթների: Միայն այսպիսով նրանք հնարաւորութիւն կ'ունենան կեանքի դժուարութիւններին դիմադրել չընկճել և յազմանակ տանել: Կեանքի մէջ քանի քանի թուլակամներ հէնց առաջին անյաջողութիւնից, դժուարութիւնից թուլացել, յուսահատել և տանջւել են: Դրանք ոչ թէ կեանքի, այլ աւելի շուտ վատ դաստիարակութեան զոհեր են:

Ամփոփեմ ասածներս: Գիտութեան և կեանքի փորձերի տուած գէնքերով խելացի կերպով կուեցէք վատ դաստիարակութեան շնորհիւ ձեռք բերած պակասութիւնների՝ մասնաւորապէս ժառանգական պակասաւոր յատկութիւնների դէմ: Ունեցէք համբերութիւն և հետեւողականութիւն: Կանոնաւորեցէք ձեր խնամքին յանձնած մանկան աշխատանքի, խաղերի և հանգստութեան ժամերը: Թեթև, նրա ուժերի համաձայն զօրծ, զբազմունք տւէք և երբէք թոյլ մի տաք թերի կատարելու, կամ կիսատ թողնելու: Հետզհետէ

ուժերի համաձայն աշխատանքը շատացրէք, ժամանակը երկարացրէք և այդպիսով աստիճանաբար նրանց մէջ կարգապահութեան և ճշտապահութեան ողի մտքէք և զարգացրէք նրանց կամքի ոյժը: Սրա համար լաւ միջոց կարող է ծառայել հետեւողական կերպով առաջ տարած գննողական ուսուցումը:

2.

Չատ անգամ մանուկներին ծոյլ են համարում, երբ իսկապէս նրանք ոչ մի մեղք չունեն: Նրանք թուլակամ են և չեն կարող որոշ տեղական զօրծ կատարել: Ի՞նչ անեն, երբ իրանց ամբողջ մանկական կեանքում ոչինչ չեն արել, առանց աշխատանքի և զբազմունքի շարունակ ուրախ զւարթ այս ու այն կողմն են թռչկոտել, ուրախութիւն վայելել. ամէն տեսակ յարմարութիւններից օգտւել են և ոչ մի նեղութիւն, դժուարութիւն չեն տեսել: Սրանք ծնողների, սղախիների, շրջապատողների կուռքը դարձած՝ յարմարութիւններով և փաղաքշանքներով են շրջապատուած եղել: Ծնողներն ու դաստիարակներն անշուշտ ցանկացել են այդ կերպ իրանց սիրասուն մանուկներին բարօրութեան և յաջողութեան մէջ պահել: Բայց, եթէ նրանք հասկանալին, որ այդպիսով ընդհակառակը զժբազմացնում և նրանց կամքի ոյժը ոչնչացնում, թուլացնում են անպատճառ կը թողնէին դաս-

տիրարակութեան այդ հրէշաւոր ձևը: Այդ կերպ
դաստիարակած մանուկները թէև քնքոյշ, բա-
րեսիրտ և զգայուն են լինում, բայց իւրաքան-
չիւր քայլափոխում երեսան է գալիս նրանց մը-
տաւոր, բարոյական անզօրութիւնը. նրանց բա-
րի ցանկութիւնները ցանկութիւն էլ մնում են
և խօսքից գործի չեն փոխւում. նրանք ոչ մի
գործի մէջ յաջողութիւն չունենալով յուսահաւ-
ւում, ընկճւում են և ձանձրոյթ զգալով հետ-
ըզհետէ ծուլանում են: Սրա պատճառը կամքի
թուլութիւնն է: Այսպիսիները ոչ թէ ծոյլեր են,
այլ թուլակամներ:

Չատ անգամ ընտանիքի անդամները իրենց
փոքրերին դասերի մէջ օգնում են և համարեա
միշտ կրկնում են, քանի դեռ նրանք աշակերտ
են, գրանով նրանք լաւութիւն անելու փոխա-
րէն վատութիւն են անում: Երբ մանուկն աշ-
խատանքի դժուարութեան չսովորի, այլ ամեն
ինչ պատրաստ գտնի, երբ նրա տեղ ուրիշնե-
րը մտածեն, նեղութիւն կրեն, նա հետզհետէ
ծուլութեան կը սովորի: Նա կ'աշխատէ միշտ
խոյս տալ ծանր մտածողութիւնից, լարւած
դրութիւնից և ինքնուրոյն գործից. այսպիսով
ծուլութիւնը նրա համար սովորական երևոյթ
կը դառնայ: Սրա հետեանքն այն կը լինի, որ
ձողիները, շրջապատողները միշտ պէտք է նրան
օգնեն, իսկ երբ բարձր դասարան հասնի, այն
ժամանակ թանգ գնով ուսուցիչներ պէտք է
վարձեն, որ նրանց օգնութեամբ շարունակէ:

Հագլագիւտ դէպքերում միայն այսպիսիները
հասակն առնելիս ինքնուրոյն գործող և մտա-
ծող են դառնում: Օգնութեան սովոր մանուկ-
ները եթէ մի երկու օգնող չունենան, տխրում,
տրտմում, նոյն իսկ արտասւում են: Աւելի երես
առածները դրա հետ միասին ոտքերը գետնէ-
գետին տալով դպրոց չեն գնում, օգնութիւն
են պահանջում:

Պարզ է, որ այս դէպքում աւելի մեղաւոր
է ընտանիքը քան դպրոցը: Ի՞նչ միջոցներով
այս պակասութեան առաջն կարող ենք առնել:

I. Սխալ դաստիարակութեան շնորհիւ մա-
նուկների ինքնասիրութիւնը այնչափ թուլացած
է, որ կարելի է ասել թուլակամ մանուկները
պատւասիրութիւն չունին. իսկ դա մարդուս
մէջ կամք առաջացնելու և զօրեղացնելու համար
մեծ նշանակութիւն ունի:

II. Միւս կողմից կարելի է ասել, որ մարդ-
կանց, մանաւանդ մանուկների մէջ բնական նա-
խանձի զգացում կայ: Եթէ այդպէս է, ուրեմն
աշխատեցէք այդ զգացումից օգտւել և չափա-
ւոր ու խելացի կերպով շարժեցէք, զրգուցէք
այդ զգացմունքը նրա մէջ: Այսպէս օրինակ.
եթէ փոքրիկ թուլակամը տեսնի ուժեղ, եռան-
դուն մէկին և նկատէ, որ ուրիշները նրան ու-
շադրութեամբ լսում, հետաքրքրւում են, գործի
են դնում և շատ անգամ նրանով պարծենում
են, իսկ իրան համարեա անուշադիր են թող-
նում, անշուշտ նրա պատւասիրութիւնը կը բեր-

գուրի, այդ բանը նրան կը ցնցէ և ցաւ կը պատճառէ:

III. Հոգեկան օրէնք I, որ բոլոր մարդիկ մանաւանդ մանուկները նմանելու յատկութիւն ունեն: Երբ թուրակամը տեսնում է իր ընկերների մէջ ուժեղ, գործունեայ, հաստատ կամքի տէր մէկին, նրա մէջ նմանելու ցանկութիւն է առաջ գալիս և մի կողմից էլ նախանձն է շարժում: Նա աշխատում է հետզհետէ նմանել նրան և նրա բնաւորութեան այդ յատկութիւնները իւրացնել: Բացի դրանից նրա պատուասիրութիւնը զարգանում է և ապագային հասկանում է, թէ ինչ է նշանակում ինքնասիրութիւնը վիրաւորել:

Այսպէս ուրեմն թուրակամներին դաստիարակելու համար հետևեալ կանոններն միշտ աչքի առաջ ունեցէք և նրանցով առաջնորդեցէք: Չեր տւած նիւթը, պատմութիւնը, դասը կանոնաւոր պահանջեցէք. հետևեցէք, որ ձեր պահանջը լրիւ, մաքուր կատարած լինեն: Գրա համար ի հարկէ սկզբում թեթեւ, հեշտ և քիչ ժամանակ պահանջող գործ, զբաղմունք պէտք է տաք, միայն պահանջեցէք, որ տւածն անթերի կատարեն և մինչև այդպէս շանեն յառաջ չգնաք, նոր դաս չտաք: Հետզհետէ վարժեցրէք և գորեղացրէք նրանց կամքի ոյժը, ներշնչեցէք ճշմարտասիրութեան, տւած խօսքի վերայ հաստատ մնալու գաղափարներ, սովորեցրէք կարգ ու կանոնի, ճշտապահութեան: Աւելի պարզ լի-

նելու համար աւելորդ չեմ համարում մի քանի օրինակներ բերել:

— Վերարկուդ ուր է, հարցնում է մայրը դպրոցից վերադարձող Բարկէն որդուն:

— Մայրիկ, ճանապարհին միայն նկատեցի, որ մոռացել եմ դպրոցում և նորից չուզեցի վերադառնալ:

— Չատ սխալւել ես. այժմ գնա և բեր:

— Ախ մայրիկ, այնքան էլ ցուրտ չէ, առանց վերարկուի էլ կարելի է մնալ, վաղը կը վերցնեմ, չեմ մոռանալ:

Բայց ճշտապահ և հաստատակամ մայրը այդ թոյլ չպիտի տայ. որդին իսկոյն և եթ պէտք է գնայ և վերարկուն բերէ:

II. Փոքրիկ Սաթենիկը դեռ դասը չի սովորել, անսխալ կարգալ դեռ չգիտէ, բայց արդէն պատրաստում է գիրքը փակելու դուրս վազել: Մայրը այդ նկատում է, հանդարտ մօտենում է սեղանին, նստում է նրա առաջ, նստեցնում է նաեւ Սաթենիկին և նորից կարդացնել է տալիս:

— Բաւական է, սիրելի մայրիկ, այժմ լաւ գիտեմ:

— Ո՛չ, դու դեռ անսխալ չես կարդում, կրկինը նորից:

Սաթենիկը փարւում է մօր վզովը, համբուրում, փաղաքշում է և ամէն կերպ ուզում է հաւատացնել, որ ուսուցիչը նրա նման խստապահանջ չէ և ինքը բաւարար կերպով կարդում է: Մայրը իհարկէ չի թուլանում և մինչև Սա-

Թենիկը լաւ, անսխալ կարգալ չի սովորում, նա Թոյլ չի տալիս խաղալու: Այսպիսով կամաց կամաց նա իր Թուլակամ մանուկներին վարժեցնում է հաստատակամութեան և երկարատև աշխատանքի:

III. Եթէ որևէ գործ, աշխատանք, գրաւոր դաս մաքուր, անթերի չի կատարել մանուկը, հայրը կամ մայրը ոչ մի պայմանով չպէտք է ընդունեն այդ կիսակատար գործը և պէտք է խիստ պահանջեն նորից կրկնել կամ գրել: Եթէ երկրորդ անգամ ևս լաւ չէ կատարած մեղմ կերպով պէտք է նկատել, որ երկրորդը առաջինից ոչնչով չի գանազանուում. նոյն իսկ եթէ երրորդ անգամ էլ վատ կատարէ, չպէտք է զիջանիլ և վերջ տալ, այլ մինչև կանոնաւոր, մաքուր և անթերի չկատարէ, ոչ խաղալ և ոչ դուրս գնալ կարելի է. բնականաբար կարիք եղած դէպքում հանգստանալու միջոց պէտք է տրւի: Եթէ մի անգամ այս յաջողեցնէք Թուլակամ երեխան կը սովորի ինքնուրոյն կերպով կրկնել, կամ հէնց սկզբից կանոնաւոր գործել, աշխատել, որպէսզի խաղից կամ ընկերի մօտ գնալուց չզրկւի: Հաստատամտութեան, ճշտապահութեան օրինակ եղէք դուք ինքներդ ձեր անձնական փորձով. համբերութեամբ հետևեցէք Թուլակամ մանուկներին իւրաքանչիւր քայլին. տեղին ու յարմարին առաջնորդեցէք նոցա: Այդ ճանապարհը կարճ չէ, բայց հաստատ է. այդպիսով միայն Թուլակամը կը դառնայ ինքնուրոյն, հաստատ

և ուժեղ կամքի աէր մարդ:

Է.

Պատահում են այնպիսի մանուկներ, որոնք իրենց հասակի համեմատ զարգացում չունեն, այսինքն, նրանք թէև մարմնով բարձրահասակ, մեծ են, բայց զարգացումով Թոյլ. սրա հակառակ, կան ուրիշներն էլ, որոնք մարմնով փոքր չեն, ֆիզիքապէս Թոյլ չեն, բայց իրենց հասակակիցներից 2-3 տարով զարգացումով յետ են մնացել. այդպիսիների թիւը հասնում է մինչև 15%: Չատ անգամ սրանց էլ ծոյլ են համարում, առարկելով, թէ նրանք չեն հետաքրքրւում և չեն ուզում պարապել: Այսպիսի մեղադրանքներն անհիմն են, քանի որ նրանց չափաբապելու պատճառները տունը, ընտանիքը, կամ նոյն իսկ մեղադրողներն իրանք են: Կան ծընողներ, որոնք իրանց զաւակներին օրով են ուզում թուցնել. դրա համար նրանց լեզուները բացելուն պէս, 3-4 տարեկան հասակից այբբենարան են տալիս նրանց ձեռքը, պատկերազարդ հրատարակութիւններով նրանց գրաւում են և կարգալ, զրել սովորեցնում, խեղճ մանուկների մտաւոր և ֆիզիքական ուժերը դեռևս չըկազմակերպած յօգնեցնում, Թուլացնում և բըթացնում են: Նման ազդեցութիւն ունեն նոյնպէս զիզիպիզի խաղալիքները, անժամանակ քաղաքավարական ձևերի սովորեցնելը: Նոյն հե-

տեանքին են հասցնում բազաքի բազմազան կեանքը, ազմուկը, խնճոյքները և այլն: Այս ամէնից մանուկները դառնում են ցրած, շատախօս, և վերջապէս յոգնում և թուլանում են: Այսպիսի հանգամանքներում նրանց բնական պակասաւոր կողմերն աւելի աճում, երևան են դալիս և մանուկները հետզհետէ դառնում են նեարդային, հիւանդոտ, թոյլ և մտաւորապէս բթանում են: Նրանց բոլոր գործարանների գործունէութեան ոյժը ընկնում է, գիտակցութիւնը թուլանում և զգայմունքների ազատ արտայայտութիւնից զրկում են: Այսպիսիները իրենց ֆիզիքականի համապատասխան չեն զարգանում և հետզհետէ իրանց ընկերներից յետ են մնում, սրովհետև դպրոցական դասերը ուժերից վեր են լինում: Մի՛թէ ուրեմն այդպիսիներին կարելի է ծոյլ անւանել:

Ներոպական երկրների կանոնաւոր դպրոցներում դրանց ծոյլի տեղ չեն դնում, այլ տեղաւորում են յատկապէս այդպիսիների համար հիմնւած դպրոցներում, որտեղ նրանց հետ բոլորովին այլ եղանակով են պարապում: Բայց որովհետև մեզանում այդ յարմարութիւնները չկան, միակ միջոցը մնում է դարձեալ ընտանեկան դաստիարակութիւնը:

Այդ բանի համար հարկաւոր է դաստիարակութեան, ընդհանուր կրթութեան խելացի մեթոդներից օգտուել, մանկան կեանքի, շրջապատի պայմաններն հիմնովին փոխել, պատի-

ճանաբար առաջ տանելով հաւասարակշռել նրա ֆիզիքական և մտաւոր զարգացումը և հասցնել միջին ընդունակութիւն ունեցող մանուկների կարգին:

Ը.

Պատահում են դէպքեր, երբ հաստատակամ մանուկներն անգամ ծուլութեան մէջ են ընկնում: Սրանք լաւ ընդունակութիւն, յիշողութիւն, մինչև անգամ աշխատելու տոկունութիւն ունեն: Այս ամէնը նրանք կարող են գործադրել այն ժամանակ, երբ ազատ, իրանց ցանկացած նիւթերով և աշխատանքներով են զբաղում: Սրա հակառակ, երբ դասերը միակերպ, տաղտկալի և նրանց բնական ցանկութեան համապատասխան չեն և այն էլ ստիպողական, այն ժամանակ նրանք բաւարարութիւն չստանալով, ձանձրանում և ծուլանում են: Այստեղ մեզաւորը նախ՝ դպրոցական ծրագիրն է. իսկապէս էլ, միակերպ, շատ անգամ ձանձրալի դասերը նրանց համար անտանելի են և նրանք աշխատում են մի կերպ խոյս տալ, ազատել այդ պարապմունքներից, բայց որովհետև ստիպւած են, դրա համար, նրանք անսիրտ, թոյլ և դանդաղ են պարապում: Այսպիսիները իրենց բաւականութիւնը գտնում են ուրիշ գրքեր կարգալով, կամ նոյն իսկ ֆիզիքական աշխատանքների արհեստների մէջ: Գնում են անտառ,

դաշտ, գիւղեր և ամէն տեղ էլ իրանց հետաքրքրող նիւթերով սիրով զբաղուում բաւականութիւն են գտնում և յագեցնում իրանց ֆիզիքական և հոգեկան պահանջները: Ապացոյց սրան, որ շատ անգամ նրանք ուրախութեամբ ծանր, դժւար աշխատանքներ յանձն են առնում և սիրով կատարում են. միայն թէ ազատեն դպրոցական անախորժ պարապմունքներէց:

Երկրորդ՝ մեղաւոր են նոյնպէս ծնողներն և ընտանեկան կրթութիւնը: Ծնողները չեն կարողացել փոքր հասակից նրան վարժեցնել կարգ ու կանոնի, երկարատե աշխատանքի, այն ինչ դպրոցը այդ պահանջում է: Նոքա երբէք չեն հետևել և դիտել, թէ իրանց որդին ինչ բանի մէջ ընդունակ է, ինչ ձիրք ունի, ինչ բան աւելի սիրով է անում: Թիշտ է դպրոցը իր ծրագրով, իր բազմաթիւ, բազմատեսակ առարկաներով այնպէս է կլանում մանկան ամբողջ ժամանակը, որ ծնողներն առիթ էլ չեն ունենում տեսնել նրան ազատ զբաղելիս, բայց և այնպէս հետաքրքիր դիտողը անկասկած կը նկատէ, թէ մինչև դպրոց գնալը և թէ դրպրոց յաճախելիս մանուկը ինչ բանի հակումն ունի:

Ուսումնասիրեցէք մանկան բնաւորութիւնը, հոգեկան ձգտումները, տեսէք, գուցէ նա բոլորովին չէ ստեղծւած դպրոցական չափած, ձեւած կեանքի համար. գուցէ նրա համար միանգամայն անտանելի է ժամերով նստել չորս պա-

տի մէջ և անընդհատ լարւած աշխատել: Կարող է պատահել, որ նրանք ազատ, անկախ, շարժուն աշխատանքի աւելի ընդունակ են և այդ գործում աւելի առաջ կը գնան: «Աւելի լաւ է կանոնաւոր արհեստաւոր լինել, քան անշնորհք գեղարեստագէտ»:

Եթէ ձեր երեխաները ազատ են զարգացել և դուք թոյլ էք տւել իրանց սիրած գործով զբաղելու, այն ժամանակ դուք շատ լաւ նկատած կը լինէք թէ նրանք ինչ բանի կոչում ունեն, ինչ ասպարիզում բաղդաւոր կը լինեն: Ցաւօք սրտի պէտք է ասել, որ, թէ դպրոցական և թէ ընտանեկան սխալ դաստիարակութիւնից իրենք մանուկները, նոյն իսկ դպրոցն աւարտելիս, երիտասարդական հասակում որոշել չեն կարող թէ ինչ բանի մէջ իրանք աւելի ընդունակ են: Ինչ շատ անգամ պատահել է հարցնել աշակերտներին, թէ ինչ են ուզում սովորել, կամ ինչ բանով պարապել առհասարակ լսել եմ «չգիտեմ»:

Մի հայր հարցնում է, թէ ինչ ասպարէզ ընտրեմ որդուս համար. ինչ բանի մէջ որ նա ձիրք ունի, կամ ինչ որ նա սիրումէ, պատասխանում եմ: Բայց հարց ու փորձից դուրս է գալիս, որ որդին ոչ մի բանի առանձնապէս կպած չէ, կամ նոյնիսկ ազատ ժամեր չէ ունեցել, որնէ բանով չէ զբաղել: Դպրոցական դասերը խել են նրա բոլոր ժամերը, նոյն իսկ կիւրակէ օրւայ կէսը: Պարզ է, որ սուսն ազատ զբաղ

մունք չունենալով՝ նոյն իսկ ինքը չէ կարողացել որոշել, թէ ինչ է սիրում:

Ըստ հասակաւոր երիտասարդներ ինձանից խորհուրդ են հարցրել, թէ ինչ մասնագիտութիւն ընտրեն: Միթէ սրանք տխուր երևոյթներ չեն: Հայրը, դաստիարակը չգիտեն, թէ իրանց որդին կամ սանը ինչ պիտի սովորէ, որ գոհ լինի: Այս պատճառով անհրաժեշտ է մանուկներին դնել այնպիսի հանգամանքների մէջ, որ նա կարողանայ ազատ, առանց ստիպմունքի զբաղել այն բանով, ինչ որ սիրում է և ինչ բանի մէջ ձիրք ունի: Հետևապէս չպէտք է պահանջել, որ իւրաքանչիւր երեխայ *ամէն ինչ* սովորի: Այն, ինչ որ մանուկը չի սիրում, կամ ինչ որ հակառակ է նրա ձգտումներին, թող նա սովորի այնքան, որքան կարող է և անհրաժեշտ է: Գարոցական աշխատանքները անշուշտ պէտք է կատարել, բայց եթէ նա որևէ առարկայ, օրինակի համար բնական գիտութիւնները բոլորովին չի սիրում, կարելի է բաւականանալ այնքանով, որ նա միջակ կերպով սովորի այդ առարկան: Եթէ նա, ընդհակառակը, թւաբանութիւնը այնպէս է սիրում, որ ազատ ժամերին անգամ նստում և կամաւոր կերպով խնդիրներ է լուծում և մինչև անգամ ճաշելն էլ է մոռանում. նշանակում է նա կոչում, ձիրք ունի մաթեմատիկայի մէջ և դա նրա ասպարէզն է: Գժբաղդաբար, կան շատ ծնողներ, դաստիարակներ և խնամակալներ, որոնք ոչ միայն իրանց սաների

ձգտումներն աչքի առաջ չունեն, այլ, ընդհակառակն, աշխատում են այդ ձգտումները խեղդել, մեռցնել նրանց մէջ և ստիպում են այնպիսի ասպարէզ ընտրել, որն աւելի շահաւէտ և օգտակար է:

Ես դիտեմ ինտելլեգենտ խնամակալներ, որոնք սաների ձիրքերին և ցանկութիւններին հակառակ ասպարէզ ընտրելով նրանց գժբաղդացրել են: Չնայելով նրանք խնամակալի ցանկացած մասնադիտութիւնը վերջացրել են, բայց և այնպէս նրանք միշտ ստիպած, ակամայ են զբաղել զբանցով և լուրջ չպարապելու շնորհիւ, ոչ մի օգուտ չեն ստացել: Այսպիսիները շատ անգամ իրանց մասնագիտութիւնը թողել, սկսել են իրանց սիրած առարկաներով պարապել, բայց զժբաղդաբար այն յաջողութիւնը չեն ունեցել, որքան կ'ունենային եթէ սկզբից զրանով մասնագիտօրէն զբաղէին: Գաստիարակութեան գլխաւոր գաղտնիքներից մէկն էլ մանուկների բոլոր ձգտումների, ցանկութիւնների, սիրած գործերի մանրակրկիտ ուսումնասիրութիւնն է: Այդ որոշելուց յետոյ, ընդհանուր զարգացողական առարկաների հետ միասին գլխաւոր ուշադրութիւնը պէտք է կենտրոնացնել այդ սիրած բանի վերայ և ամէն կողմից, նոյն իսկ չնչին և անորոշ կողմերն անգամ պարզել մանկան համար:

Թ.

Ծոյլ են համարում նմանապէս—

1) Մի կարգ մանուկներ, որոնք անտարբերութիւնը ժառանգաբար ստացել են: Սրանք սովորելու առանձին հետաքրքրութիւն չունեն և իրանց լսածի, տեսածի էութեան մէջ չեն թափանցում. մինչև անգամ եթէ այդ բաները իրանց համար նորութիւն լինեն: Այսպիսի մանուկներին շարժել, աշխատեցնել տալ բաւականին դժւար է: Մնում է գտնել այն շարժման կետը, որը այդպիսի անտարբերներին զգայուն է դարձնում: Իւրաքանչիւր ոք որևէ բանով հետաքրքրում է. բացառութիւն են կազմում մրտաւոր պակասաւորները և ապուշները. որոնց մասին չէ խօսքը: Գտէք նրանց մէջ այդ հիմնական կետը և հէնց դրա վերայ էլ հիմնեցէ՛ք ձեր յետագայ անելիքները: Ինչպէս քարքարոտ, անապատ դաշտավայրում պտղաբեր հողի փոքրիկ կտորը հետզհետէ մշակելով կարող ենք տարէցտարի ընդարձակել և կանոնաւոր մշակած երկիր դարձնել, այդպէս էլ պէտք է վարենք այս կարգի մանուկների հետ:

II. Ծոյլ են համարում երբեմն այնպիսի բանի համար, որ իսկապէս երբէք նրանից կախում չունի. դրա միակ պաճառը մտաւոր կարողութեան, յիշողութեան միակողմանի պակասութիւնն է: Ամէն մարդ միատեսակ ընդունա-

կութիւն, յիշողութիւն չունի. օրինակ, տեսնում ենք, որ մէկը սովորելու մէջ մեծ ընդունակութիւն ունի և սիրով պարապում է գրանով. բայց այդ միևնոյն մարդը թւեր, անուններ լաւ չի յիշում և սիրով չի սովորում: Ումանք էլ ընդհակառակը աշխարհագրութիւն, բնագիտութիւն շատ յաջող սովորում են, իսկ լեզուների մէջ միանգամայն անընդունակ են: Կան էլ, մաթիմատիկական առարկաների մէջ շատ ընդունակ են և ընդհակառակը, Մարդուս մտաւոր կարողութեան այս ընդունակութիւնով է բացատրում այն երևոյթը, որ աշակերտները ունեն իրենց սիրելի և ոչ սիրելի առարկաները: Այս նկատած է միայն փոքրերի, աշակերտների մէջ, այլ և հասակաւորների, նոյն իսկ տաղանդաւոր, նշանաւոր մարդկանց մէջ: Որպէս ապուցոյց մենք կարող ենք վերցնել մեծ մարդկանց կենսագրութիւնը, որոնց կեանքը, մանկավարժական գործը լաւ հասկանալու համար մեզ գեղեցիկ և և օգտակար օրինակներ կը տայ: Օրինակ, նըշանաւոր գիտնական ձեւմհօլցը իր յորելեանի ժամանակ ասում էր, որ իր մեքենայական յիշողութիւնը շատ թոյլ է. այսինքն նա լաւ կարող է յիշել միայն այն երևոյթները, որոնք իրար հետ ներքին բովանդակութեամբ կապւած են, այն ինչ մինչև այդ օրը նա աջ և ձախ ձեռքերը դժւարութեամբ էր որոշում: Այս գիտնականի համար պատիժ էր ընդարձակ յօդւածներ անգիր սովորել և առհասարակ լեզուների մէջ

ընդունակ չէր: Գէօթէն ընդունակութիւն չէ ունեցել մաթեմատիկական առարկաների մէջ, իսկ քերականութեան մէջ յաջող է եղել: Բայրօնը շատ վատ սովորել է դասական լեզուները: Պուշկինը չէր կարող թւաբանութեան չորս գործողութիւնը լաւ հասկանալ և մանաւանդ բաժանման վերայ շատ արտասուել է: Պուշկինի լսարանական վկայագրի մէջ ասւած է. «Թոյլ է, զգալի յառաջադիմութիւն ցոյց չէ տւել»: Գօգօլը նոյնպէս շատ ծոյլ է համարւել. մանաւանդ նա չէ սիրել մաթեմատիկական և յաջողութիւն չէ ունեցել ուղղագրութեան մէջ: Ուղղագրութեան մէջ թոյլ են եղել նաև Լերմօնտով, Անդերսէն և ուրիշները: Ակօսակովը թւաբանութեան մէջ այն աստիճան թոյլ է եղել, որ ուսուցիչներին յուսահատեցրել է:

III. Պատահում են դէպքեր, երբ բնականից թէ ֆիզիքապէս և թէ մտաւորապէս առողջ, ընդունակ մանուկները դարձեալ ծոյլեր են դարձել: Ընտանեկան հանգամանքները, ձախորդ դէպքերը, շրջապատողների տգէտ ու անտեղի վարմունքները նրանց ժառանգական լաւ օգտակար յատկութիւնները ճնշել ոչնչացրել են, իսկ վատ կողմերը ազատ զարգացել են: Այսպիսիները մի մի բարոյական հրէշներ են դարձել և այդ զժբազդութեան պատճառը գործից չհասկացող ծնող-դաստիարակներն են եղել:

IV. Թեթևամիտ երեխաներն ևս ծոյլ են համարուում: Այդպիսիներին չպէտք է վատ հա-

մարել. նրանք միայն ներկայով են ապրում. իրանց արածի և վարմունքի վերայ երկար չեն մտածում և հետևանքի մասին առաջուց հոգ չեն տանում: Նրանք չեն մտածում այն բանի մասին ինչ որ պիտի անեն, այլ անում են այն, ինչ որ մի ակընթարթում գրաւում է նրանց ուշադրութիւնը: Ուստի այդպիսի թեթևամիտ մանուկներին պէտք է սովորեցնել նախ մտածել, խորհել, ապա գործել: Սրինակ - կարող հմ այսօր ճաշից յետոյ ընկերիս մօտ գնալ. հարցնում է Արշակը հօրը.

— Չգիտեմ, պատասխանում է նա, դեռ պէտք է տեսնենք, արդե՞ծք վաղւայ դասերդ լաւ պատրաստել ես: Վաղը ունես ռուսերէն, թւաբանութիւն, աշխարհագրութիւն և երգ. եկ հարցնեմ, տեսնեմ լաւ սովորե՞լ ես: Երբ բոլոր դասերը հարցնում, տեսնում է, որ լաւ գիտէ այն ժամանակ միայն թոյլ է տալիս գնալու, իհարկէ մօրից նոյնպէս իմանում է, որ ուրիշ բան չկայ անելու: Գնա՛, ասում է հայրը, միայն չմոռանաս, որ ժամը 7-ին տանը պիտի լինես: Եթէ սկզբից այսպէս վարւենք, ամէն մի արածի հետևանքի վերայ գրաւենք թեթևամիտ մանկան ուշադրութիւնը, այնուհետև երեխան այլևս թեթև չի նայի իր պարտականութիւնների վերայ, անելիքի մասին կը մտածէ, ապա որոշածը կ'անէ:

Չատ անգամ դպրոցներում իրաւացի կերպով զանգատներ են լսում թեթևամիտ աշակերտների վերաբերմամբ, Գպրոցն անկարող է

սրա առաջն առնել, քանի որ մի ուսուցիչը չի կարող իւրաքանչիւր աշակերտին հետեւել և սրխալը, թեթեամտութիւնից առաջացած թերութիւնը իսկոյնսեթ ուղղել, ինչպէս այդ կարող են անել ծնողները: 2է որ ուսուցիչը ոչ թէ մէկ երկուսի հետ գործ ունի, այլ 40—50-ի հետ: Մի քանի վերայ ցանկանում եմ մատնացոյց անել, որ շատ անգամ դպրոցը, թէև ոչ դիտմամբ սնունդ է տալիս թեթեամիտ վարմունքների և հետզհետէ դօրեղացնում է այդ պակասութիւնը: Ամենից առաջ աչքի է ընկնում այն, որ ուսուցիչը տւած դասը չի հարցնում, տւած գրաւոր աշխատանքին չի նայում և ուղղում: Օրինակ, հայրը հարցնում է որդուն — Այսօր խնդիրներդ ինչպէս էիր լուծել, ճիշտ էիր հասկացել:

— 2գիտեմ հայրիկ, պր. Ա. այսօր տետրակիս չնայեց:

— Իսկ ուսերէն ոտանաւորդ լաւ կարգացիր:

— Գր. Բ. ինձ չհարցրեց:

Խեղճ տղան որպէս ճշտապահ և աշխատասէր աշակերտ, շատ գեղեցիկ գրել է տւած դասը, անսխալ ու կանոնաւոր լուծել է խնդիրները, սիրուն առողանութեամբ անգիր է արել ոտանաւորը, իսկ ուսուցիչները այդ քանի վերայ ուշք էլ չեն դարձրել, չեն հարցրել: Յաճախ տեսել է որ ընկերներից շատերը ոչինչ չեն արել, բայց և այնպէս ուսուցիչը այդ չէ նկատել և իրան հետ

հաւասար աստիճանի վերայ են կանգնած ուսուցչի աչքում: Այսպիսի դէպքերը մի քանի անգամ կրկնելուց յետոյ ճշտապահ մանուկը դառնում է անճշտապահ, հետզհետէ սկսում է թեթև նայել իր պարտականութիւնների վերայ և այսպէս աստիճանաբար զարգանում է նրա մէջ թեթեամտութիւն: Ուսուցչի հերթով հարցնելը, կամ երկար ժամանակ դաս չհարցնելը նոյնպէս այս հետեանքին են հասցնում: Բացի դրանից, ուսուցչից է կախւած առարկան այնպէս տանել, այնպէս հետաքրքրեցնել մանուկներին, որ նրանք սիրով և յոժարութեամբ կատարեն նրա պահանջը, ախորժակով սովորեն տւած դասը և ոչ թէ ակամայից, ստիպւած: Այսպիսի դէպքում նրանք երբէք թեթև չեն նայել իրանց դասերի վերայ: Հատ է պատահել, որ միևնոյն առարկան նոյն աշակերտը մի ուսուցչի մօտ բոլորովին չէր սիրում, և չէր սովորում, իսկ միւսի մօտ մեծ յոժարութեամբ և սիրով է պարապում:

V. Ծուլութիւն է առաջ գալիս և այն ժամանակ, երբ մանուկը մի կողմից աշխատանքի, նստակեաց կեանքի, զբաղմունքների չեն սովորեցրել, միւս կողմից խաղալու զւարճանալու սովորեցրել և վարժեցրել են: Այսպիսի պայմաններում պարզ է, որ չոր ու ցամաք դասերը, թւերը երբէք չեն կարող նրանց բաւականութիւն պատճառել և կապել:

Երբ Մանուկը ստիպւած պարապում է, նա

երկար ժամանակ չի կարող զրա վերայ կենդ-
րոնանալ, այլ թեթև, թուուցիկ, անսիրտ է կա-
տարում, ապացոյց սրան, երբ մի նոր զրզիւ
ստանում է, մի նոր բան աչքի է ընկնում, նա
վայրկենապէս ամէն ինչ թողնում և շտապում է
զուրս խաղալու և անհոգ վազվզելու: Այսպիսի
զէպքերում խտութիւնները չեն կարող օգնել-
ճշմարիտ է, նա երկիւղից տեղում մեխում, ան-
շարժ նստած աչքերը զրքի վրայից չի հեռա-
ցնում, բայց նա այլևս ոչ կարգացածն է ըմ-
բռնում, ոչ գրածը հասկանում, նրա գլխի մէջ
ոչինչ չի մտնում, որովհետև նա զբաղւած է
իրեն զբաւող մտքով: Սրա առաջն առնելու
միակ զեղն է խիստ կանոնաւոր, աստիճանա-
բար հետևողականութիւն օրւայ մէջ որոշ ժա-
մեր յատկացնել պարագմունքի, խաղի, հան-
գստանալու, իսկ այս ամէնի հետ սկզբներում
ծնողը կամ դաստիարակը հետը զբաղւելու է,
մինչև որ նրա համար այս ամէնը սովորութիւն
դառնայ:

I. Ծուլութեան և մտաւորապէս յետ մնալու
պատճառներից մէկն էլ համարում է մանկան
տկարութիւնը: Ամէն ժամանակ պէտք է հին
ճշմարտութիւնն աչքի առաջ ունենալ «առողջ
հոգին առողջ մարմնի մէջ»: Եթէ այդպէս է, ու-
րեմն մանկան ֆիզիքական կրթութեան, սննդա-
ուութեան, խաղի և զբաղմունքների վերայ մեծ
ուշք դարձրէք, իւրաքանչիւրի հետ իր մարմնի
կարիքների համապատասխան վարւեցէք. ֆիզի-

քական թուլութիւնը, գործարանների գանազան
խանգարումները, քնի պակասութիւնը և այլն
նրա մտաւորն էլ կը թուլացնեն: Եթէ ծուլու-
թիւնը առաջացել է հիւանդութիւնից, այն ժա-
մանակ նրա մտաւոր ուժերը խնայողաբար գոր-
ծադրեցէք, ոչ մի զէպքում ստիպմամբ չաշխա-
տեցնէք, և տնտեսելով նրա ուժերը, հիմնական
կերպով բժշկեցէք: Եթէ այդ մանուկը աշակերտ
է, դպրոց մի ուղարկէք: մի վախենաք որ նա
մի քանի ամիս, կամ նոյն իսկ մի տարի կը
կորցնէ: նա առողջանալով աւելի շուտ կը հաս-
նի ընկերներին, քան թոյլ, տկար մնալով:

II. Դժւար մտածողութիւնից էլ է ծուլու-
թիւն առաջ գալիս: Դժւար մտածող մանուկը
սիրով չի աշխատում, որովհետև մտածելը նրա
համար ծանր է, դժւարութիւն է պատճառում և
մի տեսակ պատիժ է: Այս երեկոյթն առաջանում
է նոյնպէս ֆիզիքական թուլութիւնից և հիւան-
դութիւնից: Եթէ սրանցից չէ առաջացել, այն
ժամանակ լուրջ ուշադրութիւն դարձրէք և հա-
ւասար հետևողականութեամբ աշխատեցէք ցըն-
ցել մանկանը, խաղընկերների մէջ մտցրէք նրան.
մարմնամարզութեամբ, լողալով, խաղերով զբա-
ղեցրէք և թեթև մտաւոր աշխատութիւններով
զբաւեցէք ու մտածելու վարժեցրէք: Այս ամէնի
հետ, եթէ ֆիզիքապէս թոյլ է, չափաւորութիւն
մտցրէք նրա ուտելիքի մէջ. խմիչքներ երբէք
թոյլ չտաք գործածելու, որովհետև շատ ան-
գամ ողելից խմիչքները մտաւոր թուլութիւն,

ծանր, դանդաղ մտածողութիւն են առաջ բերում:

Ծնողներ, դաստիարակներ ձեր մանուկների բնաւորութեան բոլոր լաւ կողմերը համահաւասար կերպով առաջ տարէք, նրանց գործարանները ներդաշնակօրէն զարգացրէք, որ նրանք մէկ մէկու օգնելով նպաստեն մանուկների մրտաւոր և ֆիզիքական զարգացմանը: Այս միջոցներով հնարաւոր է վերոյիշեալ երեւոյթների առաջն առնել:

Ծոյլ, չզաստիարակած մանուկները հասարակութեան բեռ և տղրուկներ են: Բնական օրէնքով ոչ մի ծնող չի ցանկանայ, որ իր որդին այդպիսի պակասութիւններով օժտւած լինի. եթէ այդպէս է, նշանակում է բարոյապէս պարտական էք մանկավարժական գիտութեան տւած միջոցներով առաջն առնել, և ժողովրդին ազատել ձրիակերներից: Միայն այդպիսով կարող էք ձեր որդիներից զոհ լինել, միայն զրանով ձեր աշխատանքը կը պսակի և հասարակութեանը օգտակար անդամներ տւած կը լինէք:



203

« Ազգային գրադարան »

NL0223038

45.984

